ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-333-20.09.2013-ՖՎ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է 2014 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության տարածքում արգելել արտարժութային վարկերը՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտների՝ հավասար տնտեսավարման դաշտում գործելու, Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի դիրքերն ամրապնդելու, միջազգային պահուստները խնայելու անհրաժեշտությունից:

Հարկ է նախ և առաջ նշել, որ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի

Հանրապետության տարածքում ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերը տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ արտարժույթով տրամադրվում են հիմնականում միայն բիզնես վարկերը, մի բան, որը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտների կողմից արտերկրի գործընկերների հետ ունեցած առևտրային հարաբերություններով: Բացի դրանից, ֆինանսավարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման նորմատիվներով տարբերակված պահանջներ են սահմանվում արտարժութային և դրամային ակտիվների համար, ընդ որում, արտարժութայինի դեպքում՝ ավելի խիստ: Փաստորեն, ստեղծված է մի իրավական դաշտ, որի պարագայում արտարժույթով վարկավորումը բանկերի համար դառնում է ավելի ծախսատար և համեմատաբար ոչ ձեռնտու:

Միաժամանակ հայտնում ենք, որ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր արտարժութային վարկավորման կտրուկ արգելումը և սահմանափակումը երկրի ֆինանսատնտեսական զարգացման ներկա փուլում կարող են առաջացնել տնտեսական ակտիվության անկում՝ կապված տնտեսավարող սուբյեկտների կողմից արտարժութային ֆինանսական միջոցների պահանջի ոչ բավարար ֆինանսավորման, ինչպես նաև ֆինանսական համակարգի բնականոն գործունեության խաթարման ռիսկով՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության ֆինանսավարկային համակարգի հաշվեկշռի պասիվային մասում արտարժութային ավանդների բարձր տեսակարար կշռով:

Տեղին է նաև նշել, որ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2009 թվականի ընթացքում տեխնիկական օժանդակությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին որպես խորհրդատվություն տրված Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կարգավորման դաշտում արտարժույթի ռիսկերի կառավարման սկզբունքներից ոչ մեկը չի անդրադառնում ազգային արժույթով վարկավորման խնդրին,

ընդհակառակը, առաջարկում է մեթոդներ՝ տարբեր արժույթներով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների արտարժութային ռիսկի արդյունավետ կառավարման համար:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի ընդունումն այս փուլում գտնում է ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի կողմից վարկերը տրամադրել բացառապես ՀՀ դրամով:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի հետ աշխատանքային քննարկման արդյունքում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***բացասական ազդեցություն***:

Արտարժութային վարկավորման արգելումը և սահմանափակումը ՀՀ ֆինանսատնտեսական զարգացման ներկա փուլում կարող է առաջացնել ֆինանսական համակարգի որոշակի խնդիրներ: Մասնավորապես՝ ՀՀ բանկային համակարգում արտարժութային պարտավորությունները գերակշելու պայմաններում Նախագծով նախատեսվող սահմանափակումը կհանգեցնի բանկային համակարգում, ինչպես նաև արտարժույթով գործարքներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար արտարժութային չհիմնավորված ռիսկի ավելացմանը, ինչը կհանգեցնի ֆինանսական կայունության խոցելիությանը:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բանկերի և բանկային գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի, ինչպես նաև բյուջետային քաղաքականության փոփոխության չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-333-20.09.2013-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ՀՀ «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» օրենքում կատարել հետեւյալ փոփոխությունը. օրենքի հոդված 34-ը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով

բա) 2014թ հունվարի 1-ից ՀՀ տարածքում բանկերի կողմից վարկերը տրամադրվում են բացառապես ՀՀ դրամով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Բոլոր տնտեսվարող սուբյեկտները կհայտնվեն հավասար տնտեսվարման դաշտում:

2. Կամրանպնդվի ազգային արժույթը՝ դրամը, կխնայվեն միջազգային պահուստները: